Գխտորի 100 փունթն` 33 եւ 35 գուլդն, եւս` 30 եւ 22:

Մորթիք այլ եւ այլ երկրի ծախեցան 4 ըստակէն մինչեւ 12 ըստակ:

Բաբաթ բաբաթ կաշի ծախեցան` 10 ըստակէն չորի 40 ըստակ:

Դառն նշի 100 փունթն` 38 գուլդի, քաղցր փայտի 100 փունթն` 28 եւ 42 գուլդն, փանգահրի փունթն` 25 եւ 60 ըստակ, չօկու լաթի փունթն` 15 ըստակ, հիլի փունթն` 43 եւ 45 ըստակ, բօրաքի փունթն` 5 եւ 6 գուլդն, քաֆուրին` 25 եւ 24 ըստակ, դահվին` 24 ըստակ, սաղըզին` 23 եւ 26 ըստակ:

Ըռավանդին` 11 եւ 14 գուլդն, մշկի օնցէն` 10 եւ 12 գուլդն: Ծեծած մարգարիտի օնցէն` 8, 10 եւ 11 գուլդն, քաթանի 100 փունթն` 65 գուլդն, կանաքի 100 փունթն` քսան մնէն չորի 33 գուլդի:

Երկաթի հարիւր փունթն` 6, 5 եւ 8 գուլդն, պղնձի 100 փունթն` 60 գուլդէն մինչեւ 68 գուլդի, դեղնապղինձն` 51 գուլդն, պղնձի տերեւն` 74, պղնձէ մաֆտուլի 100 փունթն` 67 գուլդի: Ինգլիզու կլայեկի 100 փունթն` 46 գուլդի կէս, արճըճին 100 փունթն` 23 ըսկելին, թանիքայի 100 փունթն` 32 եւ 34 գուլդն:

Հնդուստանու շօրայի 100 փունթն` 20 գուլդն բանքօյի, փոշի եղած քքուրդի 100 փունթն` 16 գուլդի, բարութին` 24 եւ 25 գուլդն, տերեւ թամբաքուի փունթն` վեցէն չորի 10 ըստակ, որիշ թթունի 100 փունթն` 9 գուլդէն չորի 32:

Իտալիու ապրիշումին եւ քնար ապրիշումին 33 ռուբաթ այ ամսէն: Իտալիու ապրիշումից ծախեցան` բաբաթ ապրիշումի գեօրայ` յիսունէն չորի 108 ըսկելին մին փունթն: Շարբաֆին` 58 եւ 60 ըսկելին, քնարն` 28, 30, 42 եւ 44 ըսկելին:

Հնդուստանու կօմպայնուց ապրիշումն բանքօյի կօնթանտ փողովն ծախեցան 26 ըսկալինէն չորի 46: Ղբրուզու մին փունթ բամբակն` 26 գրօտ, Իզմիրու բամբակն` 16 եւ 18 գրօտ, որիշ երկրի բամբակն` 24, 26 եւ 34 գրօտ:

Հնդուստանու բամբակէ մանածի փունթն` 19 ըստակէն չորի 105 ըստակ: Հալպու մանածն` 10 ըստակ, Իզմիրունն` 10, 15:

Սպանիու բրդին 21 ռուբաթ` ամսէն փողն բանքօյի: Բաբաթ բաբաթ բրդի գօրայ` բաբաթ բաբաթ գինն է'. մին փունթն 22 ըստակէն չորի 56 ըստակ: Գառան բրդին 21 ռուբաթ ամսէն` փողն բանքօյի: Մին 100 փունթ գառան բուրդն` 74 գուլդէն չորի 150 գուլդի: Կայ այլ բաբաթ բուրդ` ամսէն 15 ռուբաթ` բանքօյի փող: Մին 100 փունթն` 38 գուլդէն չորի 69 գուլդի: Գառան բուրդ` մին փունթն 14 ըստակէն չորի 25: Դա'րձեալ` այլ բաբաթ բուրդ` կօնթանտ փողով. մին 100 փունթն` 56 գուլդէն չորի 70:

Թալիսի 100 փունթն` 10 գուլդեն չուրի 20 այ:
Ցորենոյ մին լաստն` 220 դովտգուլդեն չուրի 320, գարւոյ մին լաստն` 105
դովտգուլդեն չուրի 142:

Մին լաստն Մարդամ 27 մուդ է', մին մուդն` 4 ըսկէպլս, երեք ըսկէպլսն մին ջուալ է':

Միգուրաթն այսպէս էր:

Իզմիր, Ըստամպոլ, Ջանթայ եւ Վէնէտիկ գնալն եւ գալն 7 եւ 8 էր:
Մարչիլիայ, Ջէնուայ, Լիվոնո գնալն եւ գալն` 6: Կադիս եւ Սիվիլիայ գնալն եւ
գալն` 3 կէս: Լոնդրայ գնալն եւ գալն` 2, նոյնպէս եւ Համբորգ:

Կամբին այսպէս էր:

Ի Ֆրանկֆորտ` 83 գրօտ:
Վէնէտիկ ալ ուզօ 2 ամիս, 93 գրօտ:
Լիվոնո` 98 գրօտ, նոյնպէս եւ Ջէնուայ:
Փարէզ` ալ ուզօ` 60 օր, 80 գրօտ: Լոնդրայ` 2 ամիս, ալ ուզօ, 34 ըսկէլին:
Կադիս եւ Սիվիլիայ` 127 գրօտ կէտ: Լիզբօն` 50 գրօտ: Անվէրս` ա'վի'ստա,
հարիւրին 3 կարտ զարար: Համբորգ` 33 ըստակ: Տանձկայ` 40 օր վադայ` 251
գրօտ:

Սարֆն էր.

Բանքօյի փողին` հարիւրին 5 կէս.
Մարչիլին` հարիւրին` 2:
Դուկատին` հարիւրին` 7:

Այսքան գրածս վերոյ եղած թարիղումն Մարդամու բազրկանի անցքն է:

Ի Ֆրանկստան երեք գլխաւոր լեզու կու խօսին` լաթինի, թէւտօնի կամ դօջի եւ
ըսկլաւօնի: Լաթինի լեզուէն փեյդա ելաւ Ֆրանցիզի, Իտալիանի, Սպանիօլի եւ
Փորթուգէզի լեզուն:

Դօջի լեզուէն յառաջ եկաւ Ալլեմանի, Ինգլիզի, Ֆիամենզի, Դանիմարքէզի, Շուէթի եւ
Նօրվէջի լեզուն: Ըսկլավօնի լեզուէն ծնաւ Բօշնաղի, Ռուսի, Լէիի եւ Բօհէմի լեզուն:

Կարլօ Քուինթօ, որ թուին Քրիստոսի 1519 վարեաց կայսերական իշխանութիւն,
կասէր մեծամեծացն. Ես կամէի, որ գիտուն մարդն իւր բարեկամին հետ ֆրանցիզի
խօսի, իւր ձիուն հետ` Ալլեմանի, իւր խաթունին հետ` Իտալիանի, Աստուծոյ հետ`
Սպանիօլի, դուշերի եւ թռչնոց հետ` Ինգլիզի լեզուաւ: Ազգն ֆրանցիզաց
քաղաքավարու թուականութեամբ է' թավազաջի, ալլեմանն` բարեկամ, իտալիանն`
ռաշիդ, սպանիօլն` փքալի, ինգլիզն` հպարտ:

Զգեստուք՝ փրանցիզն է՝ փոփոխական, ալեմանն՝ հետեւող, իտալիանն՝ խեղճ, սպանիոլն՝ փառամոլ, ինգլիզն՝ պսպղուն:

Կերակրով փրանցիզն է՝ նագուք, ալեմանն՝ խմող, իտալիանն՝ զգաստ, սպանիոլն՝ փոքրակեր, ինգլիզն՝ շոայլ:

Խորհրդով եւ մասլահաթով ֆրանցիզն է՝ հապճեպ եւ վռագ, ալլեմանն՝ ծանր, իտալիանն՝ բարակ, սպանիոլն՝ զգոյշ, ինգլիզն՝ վստահ: Ալեմանն է՝ արջ, ֆրանցիզն՝ արծիւ, իտալիանն՝ աղուես, սպանիոլն՝ փիլ, ինգլիզն՝ առիւծ:

Եւրօպայ, որ է՝ Ֆրանկստան՝ յարեւմտեան կողմանէ ցամաք հողումն ունի Սպանիայ, Փորթուգալն եւ Փրանցայ: Հարաւոյ կողմանէ ունի Հօլլանդայ, Ֆիանդրայ, Սուեցիայ, որ ԸՐ(°°)գվիցերի երկիրն է՝, Սաւօյեայ, Իտալիայ եւ Ալլեմանեայ: Ի հիւսիսոյ՝ ունի Դանիմարքն Եւրօպայ, Շուեթլան, Լէհն եւ Սօւեդիան: Եւրօպայի կողմանէ ունի Ըստամպոլ, Բուղդան, Տրանսիլվանիայ, Վալաքիայ, Ղրիմի երկիրն եւ Մաջան: Ովկիանոս ծովումն Ֆրանկստան ունի զայսքան գլխաւոր կղզիս. Ինգլիթեայ, Ըսկօտլանդ, Իռլանդ, Օրկանդ եւ Հէբրուդ: Միջերկրեայ ծովումն ունի՝ Մայիօրկայ, Կօրսիկայ, Սարդինիայ, Սիչիլիայ եւ Գրիդ կղզիս: Բալթիկ կամ Տանձկու ծովումն ունի Զէլլանդ, Գօթլանդ, Օյլանդ, Օյսլ, Դան եւ Ռուդ: Մին կայսր կայ, որ Բէչումն կու նստի, 7 թագաւորք կան:

Թագաւորն Ֆրանցու՝ ի Փարէզ, Սպանիու՝ ի Մադրիդ, Ինգլիթեու՝ ի Լօնդրա, Լէհին՝ ի Կրակօվ կամ ի Վարշաւն, Փորթուգալին՝ ի Լիզբօն, Դանիմարքին՝ ի Կօպնհագ, Շուեթլին՝ ի Ըստօքօլմ:

Աշխարհիս վերայ 4 գլխաւոր կրօն կայ. քրիստոնէայ, Մահմէդի, հեթանոս եւ հրէայ: Քրիստոնէից աղանդն է՝ 17:

Հեթանոսաց՝ 8, կրակապաշտ, բրաման, յուկաօ, լավգու, ամիդա, լամաս, արեւապաշտ, դեւապաշտ:

Հրէից՝ 2 գլխաւոր աղանդ, ճշմարիտ Հրէայ՝ եւ Մամարիթան:

Եղբա՛յր վաճառական, յայս գրքումս ինչ որ գրեցաւ վասն քաշից, դրամից եւ դիմաթի՝ ժամանակաւ կու փոխվի՝ կամ կավելանայ, կամ կու պակասի: Զարա ալիշվերիշի բանն աստուածադիր կանոն չէ, որ անփոփոխ լինի, բայց փոփոխական է՝, եւ մարդադիր կանոն, եւ ժամանակաւոր: Յայտնապէս միշտ՝ եւ հանապազ կու տեսնունք քաշից, դրամից եւ ապրանաց դիմաթի փոփոխումն, ինչպէս ապրիշումին, մանածին, բրդին, դրմզին եւ այլ ապրանաց. էս պատճառէս՝ թէ ժամանակաւ մեր գրածին դարշու տեսնիք, չգարմանաք, եւ ոչ վատ ասէք մեզ՝ սաբաք փոփոխումն. ինչոր մեք գրեցինք՝ ժամանակու ճշմարիտ էր եւ ժամանակաւ բազի բաներ կու փոխվի, ամա մեր գրածն բոլորովիմք սուտ չէ դառնալու: Ողջ լե՛ր եւ լե՛ր բանասէր:

Աֆրիկու ցամաքն ունի Մսրայ երկիրն, ուստի բրինձ, շաքար, խուրմայ, քաթան, դահվա, խինա, ոսպ, ունտ եւ այլ բարիք կու գան: Արաբստան, ուստի նուշ, թուզ, զէթուն, չամիչ, վուշ, լիմոն, նարինջ, խուրմայ, սպիտակ մեղր, շաքար եւ այլ բարիք, ինչպէս, ոսկի, արծաթ, պղինձ, որ ի Ֆէս, եւ ի Մառօք գտանին: Նուբիայ, որ ունի ոսկի, մուշկ, սանդալ աբանոս եւ այլ ինչ: Գինէա, ուր առատութիւն շաքարի, բրնձի,

նսկւոյ եւ այլ բարեաց: Հարաշատան, որոյ մասունքն են Լօանգ, Կոնգ, Անգօլա, Մօնօֆօտօպա, Մօնօմուգ, Քաֆրստան, Ջանգէբար, Այեան եւ այլ:

Հասարակօրէն Հարաշատան ունի առատութիւն զանջաֆիլի, շաքարի, մեղրի, քաթանի, ոսկւոյ, արծաթի, պղինձի, արճըճի, կլայեկի, երկաթի, քքուրդի եւ այլ բազում բժշկական սերմն, խոտ, արմատ, սպիտակ եւ կարմիր աղ, անթիմոն եւ այլ շատ բարիք:

Հարաշի թագաւորին Նադուշ ասեն. ինքն թագաւորն է՝ քրիստոնէայ: 6000 չադիր ունի, իւր թիկնապահ զինուորքն են 12 հազար, իւր դիվանն 120 աղայ ունի, իւր ձիաւոր զինուորքն են՝ 40 հազար, հետեւակ զինուորքն՝ 60 հազար:

Լօվանգ կռապաշտ է՝:

Կօնգ առատ ամենայն սերմամբք, պտղովք եւ տնկօք՝ ունի թամար հինդի, շաքար, ջօվզինդի, պղինձ, երկաթ, արծաթ, լաւ մարմառ, յասպիս քար եւ այլ պատուական ջավահիր, զանազան եւ զարմանալի գազանք: Են կէսակէս Քրիստոնէայք: Նոյնպէս եւ Անգօլա, որ եւ Դօնգ ասի:

Քաֆրստանու մարդն է՝ դժնէայ եւ մարդակեր, երկիրն գազանաբնակ:

Մօնօֆօթապա կամ Բէնօֆօթապա է՝ բարեխառն երկիր փոքր ինչ՝ առատ արօտիւ, ցորենով, բուսով, պտղով, եղեգնաշաքարով եւ այլ զանազան մրգօք: Ունի պատուական մադան ոսկւոյ եւ այլ: Իւրեանց լեզուաւ Աստուծոյ՝ ասեն Ատունօ, հաւատով՝ շատն կռապաշտ է՝:

Մօնօյմուգ փոքր քրիստոնէայ ունի փօրթուգէզի ազգէն՝ վայելուչ, պտղաբեր եւ շատամեղր, ոսկի, արծաթ պղինձ եւ այլ, զանազան թռչուն եւ գազան՝ ընտանի եւ վայրի:

Ջանգէբար է՝ առատ ոսկւով եւ ֆլի կեռիք շատ: Բնակօղքն են Սէյիդի, որ է մահօմէդական: Կան եւս փոքր քրիստոնէայք յազգէն փօրթուգալից, որք ունին բերդս եւ շէնս ոչ սակաւս:

Գ

Յաղագս մղոնաչափութեան.

Չափ մղոնաց կամ մլից Եւրօպայու, Ալլեմանու երկրին.

Մարդամու մինչեւ ի Ֆրանկֆօրտ.

1. Ուտրէխտ 8 միլ:
2. Արնըմ 10:
3. Նիմվէգ 3:
4. Կլէֆ 3 կէս:
5. Վէ՛զլ 8:
6. Կօլօնիա 16:
7. Բօն 5:
8. Անդրնախ 8:
9. Կօբլէնց 3:

- 10. Բախարախ 9:
- 11. Բինգն 3:
- 12. Ինգլիեյմ 3:
- 13. Մէնց 3:
- 14 Ֆրանկֆորտ 7:
- Լինի 89 միլ կէս:

Մարդամու ի Լօնդրա.

- Հարլըմ 3 միլ
- Լէդն 4:
- Դէլֆտ 3:
- Մասլանդշլու 2:
- Ի Բրիլու
- Յետոյ փաքէտ բօտովն գնայ Գրաֆսանդ:
- Էնդից ի Լօնդրայ:

Մարդամու ի Համբօրգ.

- Նարդ 3 միլ:
- Դէվնտր 12:
- Գօր 2 կէս:
- Դէլդն 1:
- Բէնթմ 3:
- Ռէնրն 2 կէս:
- Օգնաբրուգ 2:
- Մինդն 4 կէս:
- Համբօրգ 12:
- Լինի Մարդամու մինչեւ ի Համբօրգ 42 միլ կէս:
- Համբօրգու մինչեւ ի Նուրընբերգ 69 միլ:

Նուրընբերգու մինչեւ ի Ռէգընսբուրգ 12 միլ:
Ռէգընսբուրգու ջրով գնայ մինչեւ իմփերաստօրի թախսն, որ է՝ Վենայ կամ Բէչն:
Ամէն մլի մարդագլուխ՝ մին կրօյցր նավլուդ: 120 կրօյցր մին մարչիլ է՝

Վենու մինչեւ Պրէսբուրգ՝ 10 միլ, մինչեւ Սալբուրգ՝ 34: Աստի մինչեւ Ինսպրուք՝ 18:

Սալբուրգու մինչեւ ի Մոնիք՝ 17 կէս:
Մոնիքու մինչեւ Ավսբուրգ՝ 8: Աստի չուրի Ըստրասբուրգ՝ 38: Աստի Նուրընբերգ՝ 34: Համբօրգու չուրի Լուրէկ՝ 7, Բրէսլավ՝ 73, Կօլմնհագ՝ 50, Ըստօբօլմ՝ 60, չուրի Վէնէտիկն՝ 65 միլ կէս, Փարէգ՝ 115, Կօլօնէայ՝ 38: Կօլօնիու ի Բրուսլ՝ 47, Տրանկֆօրտու մինչեւ Ըստրագբուրգ՝ 27, Ավսբուրգու մինչեւ Բագիլ՝ 37 կէս, Բագիլու մինչեւ Ջէնէվրա՝ 72 մին կարտ, Փրագու մինչեւ Բրէս՝ լավ 30 միլ:

Ֆրանցու երկրին.

Ըստրազբուրգու ի Դիժօն` 43 միլ: Աստի՛ ի Սանսեր` 46: Աստի ի Պիկտեր` 45:
Աստի՛ ի Թօլօզ` 88: Աստի ի Սօնպելիք` 20: Մարչիլիու մինչեւ Ավինիօն` 31: Աստի՛
ի Վալէնցա` 23: Ջէնէվրու ի Լիօն` 21: Աստի՛ յՕրլիան` 64: Աստի՛ ի Փարէզ` 34:
Աստի՛ ի Տուր` 68: Աստի՛ ի Նանթ` 35: Դիպու ի Փարէզ` 64, աստի՛ ի Ռօվան` 22:

Սպանիու երկրին.

Բարչելօնու ի Սարագօզ` 52, Վալէնցու ի Թօլէդ` 56, Վալէնցու ի Սիվիլիայ` 103,
Գրանադու ի Կորդօվայ` 22, Մուրցիու ի Գրանադայ` 47, Սիվիլիու ի Մալագա` 31,
ի Լիգրօն` 63 կէս, ի Թօլէդ` 59: Սարագօզու ի Բիլբավ` 55, ի Սէգօվիայ` 66, ի
Սալամանկայ` 73: Վալլադօլիդու ի Թօլէդ` 53, ի Մադրիդ` 37 կէս, Մադրիդու ի
Թօլէդ` 14:

Իտալիու երկրին.

Թուրինու ի Հոմ` 377 միլ: Նիսու ի Ջէնուայ` 136, Ջէնվու ի Լուկայ` 94: Լուկու ի
Ֆլօրէնցայ` 40, ի Սիէնայ` 56: Ջէնվու ի Միլան` 86, ի Վէնէտիկ` 198: Միլանու ի
Սանթուայ` 101, ի Փէնարայ` 50: Փէնարու ի Ռավէննա` 54: Միլանու ի Տրէնտ`
122: Վէնէտիկու ի Տրէնտ` 94, ի Հոմ` 159, յԱնքօնայ` 100: Հոմու ի Նապօլի` 127:
Նապօլու ի Միսինայ` 240:

Ղօնաղ Հոմու ի Լօրէտն եւ յԱնքօնայ.

Հոմու առաջի դօնաղն` 7 միլ: Յետոյ ա՛ Կաստէլ Նուով` 8 միլ, ապա ա՛ Ռիյնան` 8,
Չիվիտա՛ Կաստէլլանա` 9, Ոտրիկոլի Կաստէլլ` 8, էստի մինչեւ Նարնի չիտտա՛` 7
միլ, էստից ի Տէրնի` 7, ա՛ Ըստրէտտուրա` 8, ա՛ Ըսպուլէտ` 8, ի Ֆոլիյն` 12, Ալլէ
Կազէ Նովէ` 7, ի Սէրավալլէ` 7, ի Մուչիա` 5, ի Վալչիմա՛րա` 8, ի Թուլէնթի՛ն` 9, ի
Մաչէրա՛տա` 10, էստեղէս կերթաս ի Լորէթն, որ է՛ Աստուածածնայ տունն: Էստից
չուրի Անքօնայ 15 միլ է՛:

Հոմու ի Սէնայ, Սէնու ի Ֆիօրէնցայ, էստից ի Բօլօյնիա, էստից ի Միլան, էստից ի
Ջէնօվա:

Հոմու առաջին օթեւանն, դոնաղն, կամ մանգիլն դէպ վերոյ գրեալ քաղաքանին է՛
Հոստերի՛ա Ըստորթա` 8 միլ, յետոյ ի Բաքան` 7 միլ, էստից ի Սօնտէնօզ` 7,
Ռօնչիլիօնէ` 8, Վիթէրբ` 10, Սօնթէ Փիասկօնէ` 8, Բօլսէնայ` 9, Աքուպէնդէնթէ` 8,
Պօնտէչէնտէնօ` 9, Ռէդիկօֆանօ` 8, Ալլարսկալայ` 8, Ըստաջօ` 8, Տավէրնէ` 8,

Կաշանօ՝ 8, Ֆիօրէնցա՝ 9, Վայլեա՝ 9, Ըսկարպէրիա՝ 8, Ռիֆրեդօ՝ 7, Պիէտրամալա՝ 8, Լոյեան՝ 8, Պիանորա՝ 8, Բոլոյնիա՝ 8, Սամոնցա՝ 10, Սոդէնա՝ 10, Սոնպորտ՝ 8, Սան Մարտին՝ 7, Ալլա Կոնկորդիա՝ 8, Սան Բենէդէտօ՝ 8, Սանթոնա՝ 9, Կաստելլաչօ՝ 7, Մարկարիա՝ 8, Սան Ջակոմո՝ 9, Պիցիքիտոն՝ 8, Ջորլէսկ՝ 10, Լոդէ՝ 10, Մարիյնան՝ 10, Միլան՝ 10, Բինասկօ՝ 10, Պավիա՝ 10, Բաստիա՝ 8, Վոզէրա՝ 8, Թորթոնա՝ 10, Բոտտոլա՝ 8, Աքու՝ 8, Ի՛զօլա՝ 10, Բորգօ՝ 4, Պոնտէ Դէ՛չիսօ՝ 8, Ջէնուա՝ 7, ի Հռոմու չուրի Ջէնվա վերոգրեալ ճանապարհան է՝ 444 միլ:

Ղօնաղ Հռոմու ի Վէնէտիկ.

Հռոմու մինչեւ առաջին դոնադն՝ 7 միլ, Կաստել Նուովօ՝ 8, Ռիյնիանօ՝ 8, Չի՛վիտա Կաստելլանա՝ 9, Օտրիկօլի՝ 8, Նարնի՝ 7, Տէրնի՝ 7, Ըստրետտուրա՝ 8, Պրոտ՝ 7, Սանթ Օրացիօ՝ 9, Պոնտէչէնտէ՛զիսօ՝ 8, Նոչէ՛րա՝ 7, Գուալդ՝ 7, Սիջիլլո՝ 7, Ըսքէջա՝ 8, Կանցիան՝ 8, Աքուալայնա՝ 8, Ուրբի՛ն՝ 8, Ֆոյլիա՝ 8, Սոնտէփօրէ՝ 8, Կորիանօ՝ 8, Ռի՛մինի՝ 8, Բելլայէրէ՝ 10, Չէզէնա՛տիկօ՝ 5, Սա՛վիօ՝ 10, Ռավէ՛ննա՝ 10, Պրիմա՛րօ՝ 25, Մայնավա՛կկա՝ 9, Վոլանի՝ 9, Գորօ՝ 18, Ֆօրնաչէ՝ 18, Քիօցա՝ 25, Քիոցու բարքայով կու մտնուս յամենավայելուչ քաղաքն Վէնէտիկ:

Ղօնաղ Հռոմայու՝ ի Նապօլի, Էնդից ի Միսինա ուղիղ ճանապարհաւ:

Հռոմու ի Տոռէ դի Մէճավիա՝ 6, Մարին՝ 6, Վելլէտրի՝ 6, Չիստէրնա՝ 6, Սէրմոնէ՛տա՝ 6, Կազէ Նուովէ՝ 8, Բադիա՝ 8, Տէռաչինա՝ 9, Ֆոնդի՝ 10, Սոլա՝ 10, Գարիլլիանօ՝ 6: Էստեղէս բարքայով 1 ջուր անց կենաս, յետոյ մինչեւ Սէսա՝ 8, Տոռէ Փրանկոլիսէ՝ 8, Կա՛պուա՝ 8, Վէրսա՝ 8, Նապոլի՝ 8, Տոռէ դէլ Գրէկօ՝ 6, Բարբաճոնա՝ 7, Սալէրն՝ 9, Տավէրնա Պինթա՝ 10, Ռէվոլէ՝ 8, Դուկէսա՝ 9, Կոլէտտա՝ 10, Սալա՝ 9, Կազալ Նով՝ 9, Ռովեր Նէգր՝ 7, Պիրիա Դալավչիա՝ 12, Կաստելուչօ՝ 6, Վալլէ Սան Մարտին՝ 6, Կաստրովիլլա՝ 9, Էսար՝ 7, Ռէջինա՝ 10, Կոսէնցա՝ 12, Կապրոսէդ՝ 7, Մարտորանա՝ 9, Սան Բրասոլ՝ 6, Աքուա դէլլա Ֆիկա՝ 7, Մոնտէլլոն՝ 9, Սան Պետր՝ 8, Ռոզա՝ 7, Սանթ Աննա՝ 9, Փոնէզ՝ 7, Ֆիումարա դէ Մոռի՝ 10, Մէսինա՝ 12: Միլանու ի Վէնէտիկ 162 միլ է: Այսքան վասն մղոնաչափութեան:

Գիտեա՛. Ալլեմանի երկրի մին միլն 4000 քայլ է՛, Փրանցու երկրին՝ 2500, հիսպանիացոցն՝ 4000, Իտալիանու երկրի միլն 1000 քայլ է՛:

Կարճառօտ պատմութիւն ռաղամի դոնէրին:

Հիմն եւ այբուրեն բոլոր ռաղամին է՛ չորս տեսակ եւ 4 դուռն համարողական արհեստին, այսինքն՝ բարդելն, դուրս հանելն, բազմացնելն եւ բաժանելն: Էստից աւելի էլ դուռն չկայ՝ թէ՛ սաղ թվի եւ թէ՛ կտոր թվի դուռն լինի: Ինչպէս հայոց

բովանդակ գրեանքն 38 այբուբենի գրովն հասիլ էլան եւ օրըստօրէ կու գրվին, այնպէս որքան հասք, ռաղամ եւ համարելոյ բան կայ աշխարհիս վերայ, ամէնն վերոյ գրեալ չորս դոներովն կու շինվի՝ թէ՛ վաճառականութեան ռաղամն, թէ՛ զինուորութեան եւ թէ՛ աստեղաբաշխութեան:

Բարդելն, որեւ ջամանել կասեն, լինի, երբ շատ համարք ՚ի մին տեղ հաւաքես: Քեզ օրինակ. Պօղոսին պարտք տվի 3425 դիան, Պետրոսին՝ 5243, Մարկոսին՝ 4352 դիան, որոյ ջամն լինի 13020՝ այսպէս եւ այսու կերպիւ.

3425
5243
4352
13020

Դուրս հանելն կամ դուս ձգելն է՛, երբ փոքր համարքն մին մեծ համարքէ կու հանես: Ինչպէս, ասենք թէ Պօղոսն, որ 8465 դիան ինձ տալացու էր, տվեց էսօր 3224 դիան: Տեսնինք մնացած բաղին քանի՛ այ՝ որ է՛ 5241 դիան: Այսպէս.

8465
3224
5241

Բազմացնելն, որ եւ գռեհկօրէն ռաղամ անել ասի, է՛ երբ մին փոքր համարքով մին որիշ մեծ համարք կու շատացնենք: Քեզ օրինակ. ես ունիմ 8642 փաստավ չուխայ, ամէն փաստավ՝ 62 գազ, տե՛ս թէ 8642 փաստավն ողջ քանի՛ գազ է՝ եւ լինին 535804 գազ:

Բազմացնելի 8642
Բազմացնող 62
17284
51852

Բազմացուցած 535804

Բաժանելն, որ գռեհկօրէն կտրատել ասի, է՛, երբ մին փոքր թուով մին որիշ մեծ համարք բաժին բաժին կանենք: Ինչպէս ասենք թէ մին հայր 96 սանդուղ արծաթ ունի եւ 6 զաւակ: Կուզէ 96 սանդուղ արծաթն 6 զաւակին բարաբար բաժին անել: Տե՛ս, թէ ամէն զաւակի քանի՛ սանդուղ արծաթ բաժին կնկնի՝ որ է՛ ամէն մնին 16 սանդուղ արծաթ բաժին: Այսպէս.

3
Բաժանելի *6 16 բաժանած
Բաժանող *6

Այս չորս բարաթէս ո՛չ աւելի եւ ո՛չ պակաս ռաղամի դուռն կայ թէ՛ սաղ եւ թէ՛ կիսատ թվին:

Ամէն թուրլու ռաղամ 3 կշեռք, միզան եւ փորձ ունի՝ մինն է՛ 9, 9 դուրս ձգելով, միւսն՝ 7, 7, երրորդն է՛ անսխալ եւ քանց այլ 2 որիշ փորձն ըստոյզ այսպէս:

Ջամ անելոյ կամ բարդելոյ կշեռքն է' դուրս ձգելն:
Դուրս ձգելոյ փորձն է' ջամ անելն: Բազմացնելոյ փորձն է' բաժանելն: Եւ բաժանելոյ միզանն է' բազմացնելն: Ահա' քեզ օրինակ.

Միզան ջամ անելոյն է դուս ձգելն.

89764
74532 - Բարդելիք
164296 - Բարդած
74532 - Փորձ
89764 - Փորձած

Միզան դուս ձգելոյն է ջամ անելն.

88543
32133 - Դուս ձգել
56410 - Մնացածն
32133 - Փորձ
88543 - Փորձած

Միզան բազմացնելոյն է բաժանելն

29 Բազմացնելի: 1
2 Բազմացնող: *8
58 Բազմացուցած *2 Փորձ
29 Փորձած

Միզան բաժանելոյն է բազմացնելն

3.
*6 Բաժանելի
*6 Բաժանող
16 Բաժանած
6 Փորձ
36 Փորձած
Այս քան կարճառօտակի' առ այս այժմոյս բաւեսցի:

Յաղագս Երեքի կանոնին:

Երեքի կանոնն է' անսխալելի.
բանասիրաց յոյժ ցանկալի.
արհեստաւորաց է' պիտանի.
Էւ ամենայն գովութեանց արժանի.
զի երեքկողի առասան է' անխզելի:
Այս երեքի կանոնաւս ամէն ռաղամջի կարէ 3 գիտացած թվով մին որիշ չըգիտացած

թիւ գտանել, կամ 3 ծանօթ համարքով մին որիշ անծանօթ համարք գտանել: Ինչպէս որ ասենք թէ՛ 3 ամսումն 20 արասի քիրայ լինի, 9 ամսումն քանի՞ արասի քիրայ կերթայ:

Պատասխանի՛ 60 արասի:

Եւս՛ 4 գազ կտան, որ 9 արասի ծախվի. տէ՛ս 16 գազն քանո՞վ լինի:

Պատասխանի՛ 36 արասի:

Էս յետին օրինակի առաջին համարն է՛ 4 գազ կտան, երկրորդ թիւն՝ 9 արասին, երրորդ թիւն՝ 16 գազ կտան եւ չորրորդ՝ չըզիտացած թիւն է՛ 36 արասին:

Ուստի լաւ իմացի՛ր, որ առաջին եւ երրորդ համարքն մին բաբաթ իքմին այ, սաքի՛ գազ կամ այլինչ: Երկրորդն եւ չորրորդ չըզիտացած թիւն մին որիշ իքմին այ, սաքի՛ արասի կամ այլինչ: Այս երեքի կանոնս միշտ այս կարգ թվոց կու պահէ:

Բայց զգուշանալ պարտիմք վասն գրելոյ ըստ կարգին այսպիսի համար եւ թիւ:

Զէ՛րա էս 3 թվոցս մինն մենակ հարցմունք ունի, եւ այս հարցանօղ թիվն համիշա պիտի երրորդ տեղումն դնել եւ գրել:

Առաջին տեղումն գրէ այն թիվն, որ երրորդ թիվն հետ մին բաբաթ իքմին այ: Կու մնայ երկրորդ թիվն, որ միջին տեղումն պիտի գրես եւ չորրորդ չըզիտացած համարքին հետ մին բաբաթ իքմին այ:

Սորա գործածելն այսպէս է:

Պիտի բազմացնենք մին զմնով երրորդ եւ երկրորդ թիվն, յետոյ բազմացուցածն՝ առաջին թիվն բաժանենք, եւ թիվն, որ ի բաժանելէն յառաջ կու գայ՝ չորրորդ չըզիտացած եւ ուզած թիւն այ:

Որիշ բաբաթ: Առաջին համարքին հետ բաժանէ՛ երրորդ համարքն, յետոյ դուրս եկած համարքն երկրորդ համարքին հետ բազմացո՛ւ: Բազմացուցած համարքն՝ չորրորդ չըզիտացած եւ քոյ խնդրած համարքն այ:

Այլ բաբաթ: Առաջին համարքով երկրորդն բաժանենք: Դուրս եկած եւ բաժանած համարքան երրորդ համարքն բազմացնենք, եւ ունինք մեր որոնած եւ չորրորդ՝ չըզիտացած համարքն:

Առաջին համարքն միշտ եւ հանապազ երրորդին հետ մին անուն պիտի ունենայ, երկրորդն՝ չորրորդ՝ չըզիտացածին հետ:

Թէ առաջին համարքն թուման է՛ երրորդն եւս թուման պիտի եւ ոչ արասի կամ շահի, թէ գազ է՛ կամ այլինչ, որ լինի առաջին համարքն, նոյնպէս պարտ է՛ լինիլ եւ երրորդ համարքն: Սապէս եւս՝ երկրորդ համարքն եւ չորրորդ՝ չըզիտացածն մէկ կերպ անուն պիտի ունենան:

Քեզ Օրինակ:

1 2 3 4
թուման գազ թուման գազ

13 7 39 21
39
1
**3
**3
1

1 2 3 4
աբասի դիտր աբասի դիտր
23 48 ** 144
3 ** (3
144

Ֆիօրին դրհամ ֆիօրին դրհամ
22 ** 106 318
** (3 3
318

Ֆարդ Երեքի կանոնին:

Այս Երեքի կանոնում թէ առաջին համարքն մեծ է շատ է', քանց երրորդն` լինի եւս մեծ երկրորդն, քանց չորրորդն, կամ թէ` երբ առաջին համարքն, քանց երրորդն փոքր է` երկրորդն եւս է' փոքր, քանց չորրորդ համարքն:

Ամա շատ անգամ կու հանդիպի, որ քանի շատ մեծ այ առաջին համարքն, քանց երրորդն` այնքան փոքր թիվ այ երկրորդն, քանց չորրորդ տեղի համարքն. եւ ասի Շրջած կանոն: Այսպիսի շրջած կանոն երբ հանդիպի` առաջին եւ երկրորդ համարքն մին զմնով բազմացո՛ւ եւ բազմացուցածն երրորդ թվովն բաժանեա՛: Քեզ օրինակ. Տռանգուլն իւր համար կարեց 1 շոր` 9 գազ չուխայով, որ 3 թիգ լայնութիւն ունէր. ամա` Ֆալջուն քանի՞ գազ մին շոր կու դառնայ էն չուխիցն, որ 2 թիգ լայնութիւն ունի:

Պատասխանի` 13 գազ եւ կէս:

3 թիգ լայն. 9 գազ. 2 թիգ լայն:

9 27. 1 (13 գազ եւ կէս:

**

*2

Շատ անգամ էս կանոնում քանց 3 թիւն` աւելի համարք էլ կլնի, որ ժամանակ` ֆայդա կամ զարար նշանց կու տայ: Այս պատճառէս ասի` Երեքի կանոն բարդած կամ խառնած: Ամա միշտ 3 թիվն գլխաւորք են եւ յայտնիք:

Երբ այսպիսի բարդած երեքի կանոն ռաստ գայ՝ պիտի կա՛մ 2 հետ երեքի կանոնն քանացնել, կա՛մ 3 անգամ, եւ կա՛մ՝ ամենայն թիվ իւր կպած թվոյն հետ բազմացո՛ւ, որ մնան 3 գլխաւոր համարքն՝ որպէս պարզ Երեքի կանոնն է՛:

Այլեւայլ օրինակ Երեքի կանոնին:

ա Ութ մարդ մին տեղ փսունդաշ են. մին մարդն ամսէն 1200 դիան փսուն պիտի տայ: Գիտացի՛ր՝ չուրի 4 տարի 8 մարդոյ փսունն քանի՞ կլնի: Այս խնդիրքս սապէս կու պարզի: Մին մարդ, որ մին ամսումն 1200 դիան փսուն տայ՝ 8 մարդ մինչեւ 48 ամիս ի՞նչ դադար փսուն կու տայ:

Յառաջ ասա՛. մին մարդն ամսէն 1200 դիան փսունդաշ է՛, ապա 8 մարդն ամսէն քանի՞ դիան պիտի փսուն տայ:

Պատասխանի՛ 9600 դիան:

Յետ սորա ասա՛. մին ամիսն որ 9600 դիան խարջ տայ, 48 ամիսն քանի՞ դիան խարջ կու տայ:

Պատասխանի՛ 460800 դիան:

Կամ թե՛՝ գլխաւոր թինն իւր կշտէն կպած թվոյն հետ բազմացո՛ւ, որ 3 գլխաւոր թիվ միա՛յն մնան:

Այս վերոյ դրեալ օրինակի գլխաւոր թիվն է՛ մին մարդն, եւ իւր կպած համարքն է՛ մին ամիսն: Երկրորդ գլխահամարն է՛ 1200 դիան, որ իւրնից կպած համար չունի: Երրորդ գլխահամարն է՛ 8 մարդն, եւ իւրնից կպած համարն է՛ 48 ամիսն: Ուրեմն, բազմացո՛ւ առաջին մին մարդն եւ մին ամիսն մին զմնով, նոյնպէս եւ երրորդ տեղի 8 մարդն եւ 48 ամիսն մին զմնով, որ լինին 3 գլխաւոր համարք: Յետոյ արա՛ որպէս հրամայէ քեզ Երեքի կանոնն:

բ Ֆլանն պիտի 200 լիբրա ապրանաց համար՝ չուրի 100 աղաջ ճանապարհ՝ քիբա տայ 800 դիան փող: Ապա Ֆաղիբբեզն քանի՞ պիտի տայ 300 լիբրա ապրանաց համար՝ մինչեւ 400 աղաջ ճանապարհ:

Պատասխանի՛ 4800 դիան փող:

Բազմացո՛ւ յառաջ մին զմնով 200 եւ 100 համարքն, յետոյ 300 եւ 400 համարքն մէկ զմէկով: Ապա՝ Երեքի կանոնաւն ռաղամ արա՛ եւ կու տեսնուս, որ Ֆաղիբբեզին 4800 դիան փող պիտի:

գ Ֆրանկստանու Ֆրանչէսկօ անուն մին բազրկան Հնդստան գնէց 50 հազար լիբրա բիբար՝ 999 հազար դիան: Ամա 3 տեղ գօմրուկ տվէց. առաջին գօմրուկն էր 100 հազար դիան, երկրորդն էր՝ 60 հազար դիան, երրորդն՝ 40 ո (հազար) դիան: Մին տեղ նավլուդ տվէց 20 հազար դիան: Ցամաքում քիբաջուց տվէց 15 հազար դիան: Վերակացուաց խարջվեցաւ 80 հազար դիան: Կուզէ իմանալ, թե 1 լիբրա բիբարն քանի՞ այ նստել իւրն, եւս՝ քանո՞վ ծախէ լիբրա բիբարն, որ 1 լիբրումն 100 դիան ֆայդա անէ:

Յառաջ քուլլի խարջն ջամ արա':

Բիբար 999000 դիան:

1 գոմբուկ 100000 դիան:

2 գոմբուկ 60000 դիան:

3 գոմբուկ 40000 դիան:

Նավլուդ 20000 դիան:

Քիրայի 15000 դիան:

Վերակացուաց 80000 դիան:

Լինի ջամն 1314000 դիան:

Յետոյ ասա', թէ 50 հազար լիբրա բիբարն արժէ 1314000 դիան: Մին լիբրէն քանի՞ դիան կ'արժէ: Եւ կու գտնուս Երեքի կանոնան, որ մին լիբրա բիբարն 122 դիան արժէ: Ուրեմն, որ 100 դիան ֆայդա անես բիբարի 1 լիբրումն՝ մին լիբրէն 222 դիան ծախէ':

Յաղագս վաճառական Ընկերութեան:

Ով որ լաւ իմանայ եւ հասկանայ Երեքի կանոնն, նորա շատ հեշտ այ Ընկերութեան կանոնն բանացնել, զարա' Ընկերութեան թէմէլն Երեքի կանոնն է':

Քեզ Օրինակ: Ասենք թէ՝ 1 քանի մարդիք մին տեղ ընկերանան եւ ամէն մարդ իւր կարողութեան գետրայ մէջ տեղ փող դնէ, եւ էն մէջ տեղ դրած փողովն 1 իքմին ֆայդա կամ զարար անեն ընկերացած մարդիքն:

Յետոյ ընկերքն ուզենան իմանալ, թէ ամէն ընկերի ի՞նչ ֆայդա, կամ ի՞նչ զարար կու հասնի՝ իւր մէջ դրած սարմայի գետրայ:

Պիտի յառաջ ամէն ընկերաց մայէն մին տեղ ջամ անել եւ դնել առաջին տեղումն: Յետոյ իւրեանց մէջ դրած փողի շահն կամ զարարն մին տեղ ջամ անել եւ դնել յերկրորդ եւ մէջտեղումն:

Ապայ ամէնուց մէջ դրած սարմայէն ջոկ ջոկ դնել յետին եւ յերրորդ տեղումն: Յետոյ ասա'. այսչափ ընկերաց մէջ դրած մայէն մին տեղ՝ այսքան շահ կամ զարար արէց: Ապա ֆլանին, որ այսքան փող դրէց մէջտեղ, ո՞րքան ֆայդա կամ զարար կու հասնի:

Այսպէս երեքի կանոնան ընկերաց մէջտեղ դրած փողն ջոկ ջոկ պիտի հարցանելով իմանալ, թէ ի՞նչ շահ կամ ի՞նչ զարար կու հասնի ամէն ջոկ ջոկ դրած սարմայի:

Որքան ընկերք կան՝ այնքան անգամ պիտի երեքի կանոնն բանացնել եւ կրկնել: Մատթէոսն մէջտեղ դրէց 60 թուման, Մարկոսն՝ 100, Ղուկասն՝ 120 եւ Յովաննէսն՝ 200 թուման:

Ջամն է՝ չորսի սարմային 480 թուման: Այս վերոյգրեալ 480 թումանովս շահեցին 6000 թուման: Տե՛ս թէ ամէն ընկերի՝ իւր մէջ դրած փողի գետրայ, ի՞նչ ֆայդա կամ ի՞նչ ռասադ կու հասնի:

Այս չորս ընկերաց սարմայի ջամն է՝ 480 թուման. այս ջամն դի՛ր յառաջին տեղումն:
Ընկերաց ֆայդի ջամն է՝ 6 հազար թուման. այս ջամն դի՛ր յերկրորդ տեղումն:
Յետոյ ընկերաց ջոկջոկ սարմայէն, որ մէջտեղ դրին՝ ջոկջոկ դի՛ր յերրորդ տեղումն,
այսպէս.

Ջամն մային. Շահն. Ջոկջոկ: Ռասադն
480 6000 60 : Մատ 750
100: Մր 1250
120: Ղո 1500
200: Յօ 2500
Ջամն 480: ջամն 6000

Յառաջ ասա՛. 480 թումանն շահ արեց 6000 թուման: Ապայ Մատթէնսի 60 թումանն
քանի՛ շահ կանէ: Մատթէնսի վացուն թուման մայէն բազմացո՛ւ մէջտեղի դրած 6
հազար թումանին հետ: Յետոյ բազմացուցածն քուլի մայի ջամովն՝ որ է՝ 480
թուման, բաժանէ՛ եւ կտրատէ՛: Կու տեսնուս, որ Մատթէնսին ռասադ կու հասնի
քուլի շահէն 750 թուման: Այսպէս մնացած ընկերտանց մայէն ջոկ ջոկ բազմացո՛ւ
քուլի շահին հետ եւ բաժանեա՛ւ մէջտեղ դրած քուլի մայի ջամովն, որ կու գտնուս
ամէն ընկերի իւր ռասադն՝ իւր մէջտեղ դրած փողի գետրայ:

Նոյն կերպ՝ եւ նոյն կանոն պիտի բանացնես, երբ ֆայդի տեղ զարար հանդիպի:
Ամմա, երբ ընկերութեան մէջն ժամանակ եւս հանդիպի, թէ բարաբար եւ թէ ավել
պակաս ժամանակ լինի՝ յառաջ պիտի ամէն ընկերի մայէն ջոկ ջոկ իւր ժամանակին
հետ բազմացնել, յետոյ այս ջոկջոկ բազմացուցած համարքն մին տեղ ջամ անել եւ
դնել յառաջին տեղումն: Ապա բովանդակ մայի ֆայդէն դնել մէջտեղն, յետոյ ամէն
ընկերի իւր ժամանակին հետ բազմացուցած մայէն ջոկջոկ դնել յերրորդ տեղն:
Ըսկսի՛ր յետոյ Երեքի կանոնան զերկրորդն եւ զերրորդն բազմացնել, եւ առաջին
համարքովն զբազմացուցածն բաժանել:

Վախճան պսակէ գգործ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Օրհնութիւն, Գոհութիւն եւ Փառաբանութիւն Ամենասուրբ Երրորդութեան, Հօր եւ
Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որ ետ կարողութիւն տկար բնութեանս՝ ի կատար
հասուցանել զայս փոքրիկ գրքուկս յՄմի Տեառն 1699, Ապրիլի 30 եւ ի Հայոց թիւն
1148, Արեգի 5, իսկ ի Փոքր թիւն 84, Ադամ 11:

Արդ՝ ով որք վայելէ եւ ի գործ-ածէ զայս գրքուկ ի յօգուտ իւր, յիշեսցէ ի ջերմեռանդ
յաղօթս զՊարոն Պետրոսն Ջուղայեցի, զՊապն իւր Սահակն եւ զՄամն
Թլամփաշայն, զՀայրն իւր Խաչատուրն, զՀօրեղբարսն եւ զՀօրաքոյրսն զՍուքիազ,
Ովանէս, Ոսկան, Վարվառեայ եւ Մինափաշայն, զեղբայրն իւր Յարութիւն եւ զքոյրն
Թալիկ, նաեւ ըզգաւակս իւր զԽաչատուրն, Մագդալինէն եւ զԿատարինէն:

Զի ի խնդրոյ եւ ծախիւք իւրով տպեցաւ այս ժողովածու փոքրիկ գրքուկս ձեռամբ
տրուպ Ղուկասու Դպրի Վանանդեցւոյ ի յօգուտ մերազնեայ Բանասէր վաճառական

Եղբարց, որք սիրեն եւ կամին իմանալ զանազան քաշս, դրամս եւ զայլինչ, որ վաճառականութեան հետեւի՝ թէ ի Ֆրանկստան, թէ ի Հնդուստան, թէ յԱջամստան եւ թէ Հռոմաստան:

Ողջ լե՛ր.

Բէյթ

Օ՛մր բարՖ ասթ՝ վա աֆթար թամուզ. ան դաքի մանդ՝ վա խօջա դօռահ հանուզ:
ՎԵՐՁ: